

Փետրուար 14, 1977

Գերաշնորհ
Տ. Արիս Եպս. Երվանեան
Հովիւ Ս. Սրբորդութիւն Եկեղեցւոյ
Թորոնթօ.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Փետր. 2, 1977 թուակիր Ձեր նամակը, որով կը տեղեկացնէր թէ Ձեր նախագահութեամբ Յունուար 30ին գումարուած է համայնքիդ ծխական ժողովը եւ կատարուած ծխական Խորհուրդի հինգ անդամներու ընտրութիւնը:

Ըստ արեւելի ըստ արեւելի ըստ արեւելի Առաջնորդ Սրբազան Հայրը հրահանգեց որ Ձեր հաղորդներ որ որպէս զի Սրբազան Հայրը վաւերացնէ նորընտիր անդամները՝ անհրաժեշտ է որ փութով Առաջնորդարան ղրկէր ներփակեալ տեղեկագիրները, ծխական ժողովի ատենագրութիւնը, մէկական օրինակ անդամներուն ղրկուած հրաւիրագրէն եւ օրակարգէն ինչպէս նաեւ բուկետներէն, ուր նշուած ըլլան թեկնածուներուն ստացած բուկետները:

Նկատի ունենալով որ Տիար Եղուարդ Էօտէմիշլեան հիւանդութեան պատճառով պիտի չկարենայ մասնակցիլ ծխական Խորհուրդի ժողովներուն, կարելի պիտի ըլլայ իր փոխարէն հրաւիրել վերջին ծխական ժողովին մէջ յաջորդ առաւելագոյն բուկէտ ստացող անձը, համաձայն Կանոնադրութեան յօդուած 27-ի վերջին մասի արամադրութեան:

Ձեր յիշած անձնափոխանորդը ո՞ր թուականին ստացած է ծխական Խորհուրդի անդամներու ընտրութեան յաջորդ առաւելագոյն բուկէտ:

Համեցէր փութով ընթացք ապա նորին Սրբազանութեան սոյն յանձնարարութեանց, վաւերացնելու համար ընտրութիւնները:

Խորին յարգանքով

Նուպար Քիլիճեան
Բարտուղար